ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2020

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 **Հասարակական աշխարհագրության ճյուղերից է.**

1) ջրաբանությունը
2) հնեաշխարհագրությունը
3) կլիմայագիտությունը
4) երկրագրությունը

2 **Երևանի հեռավորությունը հարավային բևեռային շրջագծից կլինի.**

1) 116,5°
2) 86,5°
3) 96,5°
4) 106,5°

3 **Նկար 1.- ում տրված քարտեզը կազմելու համար ի՞նչ պրոյեկցիա է կիրառվել:**

1) կոնային
2) հասարակածային
3) գլանային
4) ազիմուտային



նկար 1.

4 **Ո՞ր պնդումն է *սխալ:***

1) Մարտի 21-ին առավելագույն ջերմություն ստանում են հասարակածային լայնությունները
2) Երկրագնդի առանցքի թեքությունն իր պտտման ուղեծրի հարթության նկատմամբ կազմում է 66,5°:
3) Արեգակի շուրջը երկրագնդի պտտման երկարությունը 940 մլն կմ է:
4) Հունիսի 22-ին բևեռային ցերեկ լինում է հարավային բևեռային շրջագծի վրա:

5 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Հարաբերական բարձրությունը Երկրի մակերևույթի որևէ կետի բարձրությունն է՝ հաշված ծովի մակարդակից:
2) Աղավաղումներն աշխարհագրական քարտեզում ավելի մեծ են, քան հատակագծում:
3) Անվանական մասշտաբը պատկերվում է կոտորակի տեսքով:
4) Քարտեզում հավասար մթնոլորտային ճնշում ունեցող կետերը միացնող գիծը կոչվում է իզոթերմ:

6 **Քարտեզում երկու կետերի հեռավորությունը 6 սմ է, իսկ իրականում՝ 48 կմ: Այդ քարտեզի մասշտաբը կլինի.**

1) 1: 80 000 000
2) 1: 80 000
3) 1: 800 000
4) 1: 8 000 000

7 **Ո՞ր դարաշրջանում է երկրակեղևը կրել ալպյան ծալքավորության ազդեցությունը:**

1) Պալեոզոյան
2) Մեզոզոյան
3) Կայնոզոյան
4) Պրոտերոզոյան

8 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Ծալքաբեկորավոր լեռներում ծալքերը և բեկորներն առաջանում են տեկտոնական շարժումների բացակայության պատճառով:
2) Երկրակեղևի օվկիանոսային տիպում բազալտային շերտը բացակայում է:
3) Ուժեղ երկրաշարժի ժամանակ երկրակեղևի ամբողջ տեղամասերի թեկուզ մի քանի մետրով կտրուկ իջեցումը կամ բարձրացումը բացառվում է:
4) Հարթավայրեր առաջանում են ջրիկ լավայի արտավիժումների հետևանքով:

9 **Մթնոլորտում ո՞ր բարձրություններում է տարածվում օզոնի շերտը.**

1) 40 – 45 կմ
2) 25 - 30 կմ
3) 30 – 35 կմ
4) 35 – 40 կմ

10 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Քամիներն առաջացնում են ցունամիներ:
2) Քամու միջոցով նավարկում են առագաստանավերը:
3) Քամու միջոցով արտադրվում է էլեկտրաէներգիա:
4) Քամիներն առաջացնում են ավազաբլուրներ:

11 **Համաշխարհային օվկիանոսի հատակի ռելիեֆը պատկերող նկարում ո՞ր տառով է նշված մայրցամաքային ծանծաղուտը.**

1) Դ
2) Ա
3) Բ
4) Գ



12 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Գետի ջրի մակարդակի տատանումը կոչվում է գետի հոսք:
2) Ինչքան մեծ լինեն գետի անկումն ու թեքությունը, այնքան մեծ կլինի նրա էներգետիկ կարողությունը:
3) Կասպից և Արալյան լճերն ունեն տեկտոնական ծագում:
4) Գրենլանդիայում և Անտարկտիդայում լայն տարածում ունեն լեռնահովտային սառցադաշտերը:

13 **Բնութագրումով որոշել բնական զոնան.**

Այս բնական զոնան ունի լավ արտահայտված երկու սեզոն՝ խոնավ, տաք ամառներ, տաք և չոր ձմեռներ: Լայն տարածում ունի Աֆրիկայում և Հարավային Ամերիկայում: Ո՞ր բնական զոնան է.

1) անապատ
2) տափաստան
3) սավաննա
4) տունդրա

14 **Բարեխառն գոտու փշատերև անտառները հիմնականում ո՞ր հողերի վրա են տարածվում.**

1) պոդզոլային
2) կարմրագորշ
3) դարչնագույն
4) կարմրադեղին

15 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Անտարկտիկայում չկան գործող հրաբուխներ, և չեն լինում երկրաշարժեր:
2) Անտարկտիդայի հիմքում ընկած է Անտարկտիկական հնագույն պլատֆորմը:
3) Անտարկտիդայի արևմուտքում ձգվում է Անտարկտիկական Անդերը:
4) Անտարկտիդայի հզոր սառցադաշտերի տակ կան լեռնաշղթաներ, սարահարթեր, հսկայական գոգավորություններ և նույնիսկ իջվածքներ:

16 **Ո՞ր զույգի կղզիներն են նույն ծովում.**

1) Սարդինիա և Կորսիկա
2) Հոնսյու և Կալիմանտան
3) Սուլավեսի և Ճամայկա
4) Հոկայդո և Թայվան

17 **Հարավային Ամերիկայի ամենաբարձր և ամենացածր կետերի բարձրությունների տարբերությունը կազմում է.**

1) 7100 մ
2) 6800 մ
3) 6900 մ
4) 7000 մ

18 **Ընտրել Հարավային Ամերիկայի բնական զոնաների տեղական անվանումների և բնական զոնայի կամ այն ընդգրկող տարածքի համապատասխանությունների ճիշտ շարքը.**

ա. պարամոս	1. խոնավ հասարակածային անտառներ
բ. պամպա	2. բարձրալեռնային մարգագետինները Անդերի լեռնաշղթայում
գ. սելվաս	3. սավաննաները՝ Բրազիլական սարահարթում
դ. կամպոս	4. մերձարևադարձային տափաստանները Լա-Պլատայի դաշտավայրի հարավում

1) ա–2, բ–1, գ–4, դ–3
2) ա–2, բ–4, գ–1, դ–3
3) ա–3, բ–4, գ–1, դ–2
4) ա–3, բ–1, գ–4, դ–2

19 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Հյուսիսային Ամերիկայում չկան անապատներ և կիսաանապատներ:
2) Կենտրոնական Ամերիկայում, Կարիբյան ծովի կղզիներում տարածվում են խոնավ արևադարձային անտառներ և սավաններ:
3) Հյուսիսային Ամերիկայի տունդրայի զոնայում տիրապետող են մամուռներն ու քարաքոսները:
4) Կանադական կղզեխմբում ու Գրենլանդիայում առավելապես տարածվում է սառցային զոնան:

20 **Ատլանտյան օվկիանոս թափվող գետ է.**

1) Կոլումբիան
2) Մակենզին
3) Միսիսիպին
4) Կոլորադոն

21 **Ո՞ր շարքում *սխալ* կա.**

1) Դրակոնյան, Կապի, Ատլասի—լեռներ
2) Նամիբ, Կալահարի, Սահարա—անապատներ
3) Տանգանիկա, Նյասա, Շարի—լճեր
4) Զամբեզի, Նեղոս, Օրանժ—գետեր

22 **Աֆրիկայի մերձարևադարձային մշտականաչ անտառների ու թփուտների բնական զոնայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Տարածված կենդանատեսակներն են էմու ջայլամը, դինգո շունը և բադակտուցը:
2) Մթնոլորտային տեղումներն առավելապես թափվում են ձմռանը:
3) Հողային ծածկում գերակշռում են շագանակագույն և մոխրագորշ հողերը:
4) Տարածված բուսատեսակներն են բաոբաբը, ֆիկուսը, կաուչուկատու հևեան:

23 **Եվրասիայի բարեխառն կլիմայական գոտու վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Ցամաքային կլիմայի մարզում կլիմայի ցամաքայնությունն արևմուտքից արևելք նվազում է:
2) Ամենափոքր տարածքը զբաղեցնում է բարեխառն ցամաքային կլիմայի մարզը:
3) Ամենամեծ տարածքը զբաղեցնում է բարեխառն մուսսոնային կլիմայի մարզը:
4) Ծովային կլիմայի մարզը բնութագրվում է մեղմ ձմեռով, զով ամառով:

24 **Ո՞ր երկիրն է եղել ԽՍՀՄ–ի կազմում.**

1) Լեհաստանը
2) Մոնղոլիան
3) Էստոնիան
4) Վիետնամը

25 **Ո՞ր պնդումն է ճիշտ:**

1) Մեգալոպոլիսները խմբային տարաբնակեցման պարզ ձևեր են:
2) Ավստրալիան և Ռուսաստանը խտաբնակ երկրներ են:
3) Քրիստոնեությունը և բուդդայականությունը ազգային կրոններ են:
4) Զարգացող երկրներում բարձր են ուրբանիզացման աճի տեմպերը:

26 **Երկրի բնակչության թիվը 8 մլն մարդ է, բնակչության միջին խտությունը՝ 160 մարդ/կմ^2: Երկրի տարածքը կլինի.**

1) 80 հազ. կմ^2
2) 20 հազ. կմ^2
3) 40 հազ. կմ^2
4) 50 հազ. կմ^2

27 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Վուշը ցրտադիմացկուն և խոնավասեր բույս է, մշակվում է բարեխառն գոտու հյուսիսային լայնություններում:
2) Թեյի հայրենիքը Չինաստանն է:
3) Բրինձը հացահատիկների շարքում ամենաջերմասերն ու խոնավասերն է:
4) Եգիպտացորենի հայրենիքը Եգիպտոսն է:

28 **Արտադրանքի ծավալով համաշխարհային արդյունաբերության առաջատար ճյուղն է.**

1) թեթև արդյունաբերությունը
2) մեքենաշինությունը
3) էլեկտրաէներգետիկան
4) մետաղաձուլությունը

29 **Հարավարևմտյան Ասիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Իրանը և Իրաքը փյունիկյան արմավի մշակությամբ աշխարհի առաջատար երկրներն են:
2) Եմենում բացակայում է երկաթուղին
3) Տարածաշրջանի տնտեսապես ամենազարգացած պետությունը Իսրայելն է:
4) Թուրքիայի տնտեսության առաջատար ճյուղը նավթարդյունահանումն է:

30 **Բնութագրումով որոշել երկիրը.**

Այս ասիական պետությունն ունի բազմազգ բնակչություն: Բնակչության մեծ մասն ուղղափառ քրիստոնյաներ են: Արդյունաբերության մեջ առաջնային տեղը պատկանում է գյուղատնտեսական հումք մշակող ճյուղերին: Աճեցվող կարևորագույն մշակաբույսերն են թեյը և ցիտրուսային պտուղները: Մակերևույթը լեռնային է, հարուստ է ռեկրեացիոն ռեսուրսներով:

1) Լիբանան
2) Ադրբեջան
3) Հորդանան
4) Վրաստան

31 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Քիմիական արդյունաբերությունը գերազանցապես տեղաբաշխված է զարգացող երկրներում:
2) Քիմիական արդյունաբերության տեղաբաշխման վրա ազդում է ջրատարության գործոնը:
3) Քիմիական արդյունաբերության տեղաբաշխման գործում մեծ է կոմբինացման (համակցման) դերը:
4) Քիմիական արդյունաբերության տեղաբաշխման վրա մեծ ազդեցություն ունի էկոլոգիական գործոնը:

քարտեզ 1

32 **Ո՞ր պետությունն է քարտեզ 1– ում նշված Դ տառով.**

1) Մոլդովա
2) Բուլղարիա
3) Ռումինիա
4) Հունգարիա

33 **Ո՞ր մայրաքաղաքն է քարտեզ 1–ում նշված Ը տառով.**

1) Ռիգա
2) Օսլո
3) Հելսինկի
4) Ստոկհոլմ

34 **Կենտրոնական Ասիա տարածաշրջանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Թեթև արդյունաբերությունը զարգանում է ներկրվող հումքի հաշվին:
2) Տրանսպորտային ցանցը խիտ է:
3) Բնակչության միջին խտությունը բարձր է:
4) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:

35 **Մշակաբույսերից որի՞ մշակությամբ է Չինաստանն աշխարհում գրավում առաջին տեղը.**

1) արևածաղկի
2) կակաոյի
3) բամբակենու
4) սուրճի

36 **Աֆրիկայի ո՞ր երկրները ելք *չունեն* դեպի ծով.**

1) Մոզամբիկ և Տանզանիա
2) Նիգեր և Ռուանդա
3) Թունիս և Մարոկկո
4) Գանա և Մավրիտանիա

37 **Ավստրալիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Ստորերկրյա արտեզյան ջրերի պաշարներով աշխարհի առավել հարուստ երկրներից է:
2) Աշխարհի ամենախիտ բնակեցված մայրցամաքներից է:
3) Արդյունաբերության առաջատար ճյուղը թեթև արդյունաբերությունն է:
4) Բնակչության թվով ամենախոշոր քաղաքը Կանբերան է:

38 **Ամերիկայի Միացյալ Նահանգներին (ԱՄՆ) են պատկանում.**

1) Կանարյան կղզիները
2) Ֆոլկլենդյան կղզիները
3) Մեյշելյան կղզիները
4) Հավայան կղզիները

39 **Լատինական Ամերիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Խոշորագույն նավահանգիստներից են Բուենոս Այրեսն ու Ռիո դե Ժանեյրոն:
2) Նավթի արդյունահանման ծավալով առաջատար երկիր է Չիլին:
3) Պարանա գետի վրա է կառուցված Իտայպու խոշորագույն ջրէկը:
4) Շաքարի արտադրության ծավալով Բրազիլիան աշխարհում առաջինն է:

40 **Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Ոսկու արդյունաբերությունը հիմնականում կենտրոնացած է Կոլա թերակղզում:
2) Բնական գազի պաշարներով աշխարհում գրավում է առաջին տեղը:
3) Էլեկտրաէներգիայի մեծ մասն արտադրվում է ատոմային էլեկտրակայաններում:
4) Նավթի հիմնական պաշարները տեղաբաշխված են Կուզբասի, Կանսկ–Աչինսկի ավազաններում:

41 **Ի՞նչ ծագման լճեր *չկան* Հայկական լեռնաշխարհում.**

1) փլվածքային
2) սառցադաշտային
3) մնացորդային
4) տեկտոնահրաբխային

42 **ԼՂՀ (Արցախի Հանրապետություն) ո՞ր վարչական շրջանը և կենտրոնը համանուն *չեն.***

1) Հադրութի
2) Մարտակերտի
3) Ասկերանի
4) Քաշաթաղի



քարտեզ 2

43 **Քարտեզ 2–ում Վեղի գետը ո՞ր տառով է նշված.**

1) Դ
2) Ա
3) Բ
4) Գ

44 **Քարտեզ 2–ում Վաղարշապատ քաղաքը ո՞ր տառով է նշված.**

1) Ը
2) Ե
3) Զ
4) Է

45 **ՀՀ բնակչության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Ռուսները հիմնականում բնակվում են Վայոց ձորի մարզում:
2) Թվաքանակով երկրորդ ազգը ասորիներն են:
3) Եզդիները հիմնականում բնակվում են Սյունիքի մարզում:
4) Ազգային կազմով աշխարհի առավել միատարր պետություններից է:

46 **ՀՀ–ում ուրբանիզացվածության ամենաբարձր մակարդակ ունեցող մարզն է.**

1) Շիրակը
2) Սյունիքը
3) Արարատը
4) Արմավիրը

47 **ՀՀ արդյունաբերության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Ալյումինի արտադրությունը բացառապես օգտագործում է տեղական հումք՝ Թեժ լեռան և Շվանիձորի (Մեղրու լեռնաշղթա):
2) Մեքենաշինության զարգացումը պայմանավորված է սև մետաղների առկայությամբ:
3) Մետաղաձուլության մասնագիտացված ուղղություններից է մոլիբդենի արտադրությունը:
4) Քիմիական արդյունաբերության խոշոր կենտրոններ են Հրազդան և Գյումրի քաղաքները:

48 **Ո՞ր մարզում չկա երկաթուղային կայարան.**

1) Լոռի
2) Գեղարքունիք
3) Վայոց ձոր
4) Շիրակ

49 **Արագածոտնի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Հողային ծածկույթում գերակշռում են կիսաանապատային հողերը:
2) Ընդերքը հարուստ է հրաբխային ապարատեսակներով:
3) Տարածքի բարձրաչափական նիշերի մեծ տարբերության պատճառով կլիման բազմազան է:
4) Հիմնական ջրային զարկերակը Քասաղ գետն է՝ Գեղարոտ և Ամբերդ գլխավոր վտակներով:

50 **Կոտայքի մարզում բուսաբուծության ո՞ր ենթաճյուղը զարգացած չէ.**

1) բանջարեղենի մշակությունը
2) ծխախոտի մշակությունը
3) հացահատիկի մշակությունը
4) պտղաբուծությունը

51 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Լուսասինթեզի ժամանակ բույսերը կլանում են թթվածին և արտանետում ածխաթթու գազ:
2) Անտառներն ունեն ջրապաշտպան, հողապաշտպան, դաշտապաշտպան, կլիմայաստեղծ նշանակություն:
3) Անտառների պահպանմանն ու վերականգնմանն ուղղված միջոցառում է հատուկ պահպանվող տարածքների ստեղծումը:
4) Բուսականությունը մասնակցում է նյութերի և էներգիայի համամոլորակային շրջապտույտին:

52 **Օդային ավազանի առավել մեծ տեխնածին աղտոտվածություն ունեցող երկիր է.**

1) Ավստրալիան
2) Բրազիլիան
3) Պորտուգալիան
4) Ճապոնիան

53 **Հետևյալներից ո՞րը հողաբարելավման միջոցառում *չէ*:**

1) կլիմայավարժեցում
2) ոռոգում
3) քարամաքրում
4) անտառապատում

54 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Հողերի վատթարացման պատճառ է արոտավայրերի գերարածեցումը:
2) Արգելոցը հատուկ պահպանվող տարածք է, որտեղ ամբողջությամբ արգելված է մարդու արտադրական գործունեությունը:
3) Բուսական և կենդանական աշխարհը շատ աղքատ է երկրագնդի մերձարևադարձային գոտիներում:
4) Ջերմոցային էֆեկտի ուժեղացման հետևանքով բարձրանում է երկրագնդի միջին ջերմաստիճանը:

55 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Էկոլոգիական աղետալի շրջաններն աշխարհում աստիճանաբար ավելանում են:
2) Թույլ զարգացած երկրներին հատկապես բնորոշ է պարենային հիմնախնդիրը:
3) Համաշխարհային օվկիանոսը եկրագնդի մասշտաբով կլիմայի կարգավորիչ է:
4) Մարդկային զարգացման համաթվի հաշվարկման գլխավոր բաղադրիչ է տվյալ պետության քաղաքական իրավիճակը:

56 **Գրել այն ապարների համարները, որոնք ունեն օրգանական նստվածքային ծագում.**

1) ավազ
2) խարամ
3) տորֆ
4) տուֆ
5) կրաքար
6) խճաքար
7) օբսիդիան
8) գնեյս

57 **Տրված են աշխարհի նշանավոր լճեր: Գրել տեկտոնական ծագում ունեցող լճերի համարները.**

1) Բայկալ
2) Մեծ արջի
3) Չադ
4) Նյասա
5) Տանգանիկա
6) Վետերն
7) Աթաբասկա
8) Արալյան

58 **Տրված են ծովային սառը հոսանքներ: Գրել Ատլանտյան օվկիանոսի ծովային հոսանքների համարները.**

1) Բենգելյան
2) Լաբրադորյան
3) Կալիֆոռնիական
4) Պերուական
5) Կանարյան
6) Սոմալիի
7) Օյա Սիո
8) Ֆոլկլենդյան

59 **Գրել այն լեզուների համարները, որոնք չեն մտնում սլավոնական լեզվախմբի մեջ.**

1) լեհերեն
2) սերբերեն
3) շվեդերեն
4) բուլղարերեն
5) չեխերեն
6) սլովակերեն
7) ռուսերեն
8) էստոներեն

60 **Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են խոզաբուծությամբ.**

1) Հնդկաստան
2) Ինդոնեզիա
3) Գերմանիա
4) Իրան
5) Թուրքիա
6) Չինաստան
7) Պակիստան
8) Ճապոնիա

61 **Գրել այն տարածաշրջանների համարները, որոնք մասնագիտացված են խաղողագործության մեջ.**

1) Սևանի ավազան
2) Արարատյան դաշտ
3) Շիրակի դաշտ
4) Մասրիկի դաշտ
5) Կոտայքի սարավանդ
6) Սյունիքի բարձրվանդակ
7) Լոռվա սարահարթ
8) Արփայի հովիտ

62 **Հայկական լեռնաշխարհի տրված գետերի համարները դասավորել ըստ դրանց վտակների վրա գտնվող ջրվեժների հետևյալ հաջորդականությամբ՝ Թորթումի, Շաքիի, Թռչկանի.**

1)Ճորոխ 2) Փամբակ 3) Որոտան

63 **Տրված հարթավայրերը դասավորել բարձրության աճման կարգով.**

1) Միջագետքի
2) Միջինռուսական
3) Մերձկասպյան
4) Շիրակի

(64-65). Լեռան գագաթին մթնոլորտային ճնշումը 340 մմ է, օդի ջերմաստիճանը՝ –6°C, իսկ ստորոտին՝ +12°C (հաշվարկը կատարել 6°–ով).

64	Որոշել լեռան հարաբերական բարձրությունը:

65	Որոշել մթնոլորտային ճնշումը ստորոտում:

(66-67) Քաղաքի բնակչության թիվը 80 000 է, բնակչության բացարձակ բնական աճը՝ 800 մարդ: Եկածների թիվը 2 000 մարդ է, մեկնածների թիվը՝ 1500 մարդ.

66	Որոշել միգրացիայի մնացորդը:

67	Որոշել քաղաքի բնակչության թիվը 1 տարի հետո:

68	Երկրի նավթի պաշարները կազմում են 2,4 մլրդ տ, տարեկան հանույթը՝ 80 մլն տ: Որքա՞ն է ռեսուրսապահովվածությունը:

69 **Գերմանիայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Արտահանման մեջ գերակշռում են բնական գազն ու նավթամթերքները:
2) Տնտեսությունը գտնվում է զարգացման հետինդուստրիալ փուլում:
3) ՀՆԱ-ի կառուցվածքում ամենափոքր բաժինը զբաղեցնում է սպասարկման ոլորտը:
4) Արդյունաբերության առաջատար ճյուղերից են մեքենաշինությունն ու քիմիական արդյունաբերությունը:
5) Գյուղատնտեսությունն աչքի է ընկնում մեքենայացման ու քիմիացման բարձր մակարդակով:
6) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:

70 **ՀՀ Գեղարքունիքի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Մարզի գյուղերում է ապրում բնակչության մեկ երրորդը:
2) Առկա են քրոմիտի և ոսկու պաշարներ:
3) Կլիման բարեխառն լեռնային է:
4) Տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է:
5) Հողածածկույթում գերակշռում են լեռնաանտառային գորշ հողերը:
6) Անասնապահության առաջատար ճյուղն է խոզաբուծությունը: